

կուին նաեւ տարբեր ֆեաւներու: Երբեմն կը պատահի որ վէրք չկայ, փոքրիկ երակներն են միայն, որ քիչ մը կը ֆեաւուին, մարմինին մէկ տեղը կը կապուտնայ, կ'ուռի. սակայն այս ամէնը կ'անցնի շուտով: Բայց կան դէպքեր, երբ գուրտէն ոչինչ կ'երեւի, իսկ ներսէն կը ֆեաւուի կարեւոր գործարան մը, օրինակ՝ լեարգը, թոքերը, Հիւանդը ուժաթափ կ'ըլլայ, կեանքը վտանգի տակ է: Պատերազմի ժամանակ, թնդանօթի պայթիւններէն, ուժեղ ցնցումէն առաջ կուգան զանազան վտանգաւոր դէպքեր: Այդպիսի հիւանդները պէտք է տանիլ անմիջապէս բժիշկին, իսկ մինչեւ այդ՝ պէտք է հիւանդը հանգիստ վիճակի մէջ դնել, թարմ օդ տալ, բանալ օձիքը և հանել աւելորդ զգեստները: Եթէ հիւանդին դէմքը շատ գունատ է, պէտք է պաղ ջուր սրսկել դէմքին վրայ, պակկեցնել զայն այնպէս մը, որ ոտքերը և մարմինին վարի մասերը ըլլան գլուխէն բարձր. այս նըպատակով կարելի է բան մը դնել մահճակալին ոտքերուն տակ:

(Շարունակելի)

ՆԱԽԱԿԱՏՈՒՓ

Տօքթ. Ա. Ն. ՄԵԶՊՈՒՐԻՆԱՆ (Պօլիս).— Պատահմամբ մեր ձեռքը անցած “Նոր լուր”ի մէկ թիւին մէջ (20 Յունուար 1928), յիշելով “Բուժանք”ի Յունուարի թիւին մէջ լոյս տեսած “Հայ բժշկ. գրականութիւնը 1927ին” յօդուածը, կը գրէք. “... Ի՞նչ մատնուած էին աւանանշանորոգեալ թերթերու, ոչ նուազ աւանանշանորոգեալ յօդուածագիրները...” Եւայն, Այդ յօդուածին մէջ յիշուած են միայն, ինչպէս նկատել տրուած է ինչ, անցեալ տարուոյ ընթացքին բժշկական յօդուածներ հրատարակած եւ “Բուժանք” ի ղրկուած թերթերու անունները. քանի մը յօդուածագիրներու անուններուն հետ: “Նոր լուր” չենք ստանար, հետեւաբար չէինք կրնար գիտնալ թէ ինչ բժշկական յօդուածներ եւ յօդուածագիրներ երեւցած էին ինչ, ցենք ստանար նաեւ ուրիշ կարգ մը թերթեր, որոնց “Բուժանք” կը ղրկուի կանոնաւորաբար եւ որոնցմէ խնդրած էինք մեզի ղրկել գէ՛ծ իրենց թերթին այն թիւերը, որոնք բժշկական յօդուածներ կը պարունակեն, որպէսզի կարենայինք պատրաստել Իայ բժշկ. գրականութեան մասին տարեկան ամբողջական տեսութիւն մը: Այս պատճառով ալ, անկատար եղաւ ան, եւ հակառակ մեր կամքին ու “գիտութիւնն ու բժշկութիւնը ամէն հոսանքէ վեր բունելու մեր բընաբանին” ինչպէս կը գրէք, ստիպուեցանք յիշել միայն քանի մը եւ ոչ “աւանանշանորոգեալ” թերթերու եւ յօդուածագիրներու անունները:

Այս առթիւ, ուրախութեամբ կը յիշենք Թէոդիկի “Ամէնուն Տարեցոյց”ին մէջ մեղրի եւ մեղրաբուժութեան մասին ձեր հրատարակած յոյժ շահեկան ուսումնասիրութիւնը, եւ մամուլի մէկ մասին ուշադրութեան կը յանձնենք փոխանակութեան տարրական սովորութիւնը...

ԽՄԲ.